

# Ա Մ Ս Է - Ա Մ Ի Ս

## ՃԲԱՆՍԱ

**ՓԱՐԻՉԻ ՀԱՅ ԲՃՇԿ. ՄԻՈՒԹԻԴԸ** դժբախտութիւնը ունեցաւ կորսնցնելու, Օգոստոսի մէջ, իր անդամներէն Տօքթ. Հրանդ Հանրէր:

Հանգուցեալը Օսմ. Բժշկ. Համալսարանը յաջողութեամբ աւարտելով, քանի մը տարի օգնականուսուցչի պաշտօն վարած էր: Դեռ ուսանողութեան շրջանին կատարեւագործած է մանկաբարձական գործիք մը — le forceps correcteur — որու իրաւունքը գնած է ֆրանսական մեծ տուն մը: Հնարած է բժշկական նոր շերմաչափ մը, սակորի բեկումները դարմանելու համար կատարեւագործուած գործիք մը, սրտի եւ իրանի ներքին գործողութիւնները գիւրացնելու համար կուրծքին վանդակը շատ լայն բանալու յատուկ գործիք մը, եւ վերջապէս վէրքերու մէջէն թարսից դուրս քաշելու յատուկ քառլուէ գործիքներ - drains filiforme - որոնք շատ գնահատուած են վիրաբույժներու կողմէ: Ողբացեալ արուեստակիցը ունէր տակաւին շատ մը գիտական պրպտումներ, բայց գեղարտաբար երկարատեւ հիւանդութիւնը եւ մահը ընդհատեցին իր բեղուն ու խոտովալից կեանքը:

**ՌէՕՆԹԿԷՆԻ ԶՈՋ ՄԸ ԵՒՍ.**— Վերջերս Փարիզի մէջ մեռաւ Տօքթ. Մէնառ, գիտութեան զոհ մը եւս որ կ'աւելնայ ուէօնթիկէնեան ճառագայթներու ուսումնասիրութեան եւ կիրառումին նուիրուած եւ անոնց մահացնող աղբեղութիւններուն զոհ դացած բազմաթիւ գիտուններու շարքին վրայ: 1910էն ի վեր սկսած

էր այրուցքներ, վէրքեր ունենալ որոնց հետեւանքով քանի մը մատերը, աջ աչքի կողմ, վերի շրթունքին մէկ մասը անդամահատուած եւ ձախ աչքը հանուած էր: Եւ սակայն մահուընէն դեռ 5 օր առաջ կ'աշխատէր, թէեւ ձախ երեսը եւ մարմնին վրայ բազմաթիւ խոցեր ելած էին եւ սկսած էր անդամալոյծ դառնալ: Եթէ պետք է հերոս անուանել այն մարդը որ մէկ անգամէն իր կեանքը կը զոհաբերէ, ապա ինչպէս կոչել այն բժիշկները, ինչպէս Տօքթ. Մէնառը, որ տարիներ շարունակ եւ ամէն օր իրենց կեանքը գիտակցաբար կը զոհաբերեն գիտութեան եւ մարդկային յառաջգիւմութեան:

**ՄԱՐՍԻԼԻՈՅ «ՆՍՂԱՍՍԱՐԴ»**  
 Լսարանական նորակազմ միութիւնը իր առաջին դասախօսութիւնը նուիրած է առողջապահական նիւթի մը: Փափաքելի է որ մեր զանազան միութիւնները (Հ. Մ. Ը. Մ., Զափահաս Որբերու, Երիտասարդաց, եւայլն) ալ աւելի հետաքրքրուին առողջապահական խնդիրներով: Վստահ ենք որ ո եւ է արուեստակից չպիտի ղլանայ իր աջակցութիւնը:

**ԹՈՒԲԱԽՏԻ ՊԱՏՈՒԱՍՏՈՎ,**  
 Հինգ տարիէ ի վեր մօտ 10,000 նորածինի վրայ կատարուած փորձերը շատ քաջալերական արդիւնք տուած են: Այս պատուաստը կը տրուի միայն նորածիններուն տասներորդ օրէն առաջ: Այդ փորձերու համաձայն, վարակումի ենթակայ բոլոր պատուաստուած նորածիններէն, 0 էն մինչեւ 1 տարեկան 2 առ հարիւր միայն կը մեռնին, իսկ չպատուաստուածներէն 25 առ հարիւր (Փարիզի մէջ 32,6 առ հարիւր): Հետեւաբար Թոքաստով մեռնելու ենթականերէն 93 առ հարիւրը կազատին

պատուատի շնորհիւ, որ բուրդովն անվնաս է: Կարծէ որ բուր հայ մայրերը պատուատել տան իրենց նորածինները:

**ՓԱՐԻՉԻ ԲԺՇԿ. ԱԿԱԳԵՄԻԱՆ**

Կը պարտատուի Դեկտեմբերին հանպիսակարայէս տօնել Լաէնէքի (Laënnec) մահուան հարիւրամեակը: Լաէնէք, որ ծնած է 1781ին Պըթանքըի մէջ (Յըանաս) եւ մեռած 1826 ին, սուսջինը ըլլալով Լըջօրէն ուսումնասիրած է թոքախոր եւ զայն ծանօթացուցած գիտական աշխարհին: Մինչ այդ՝ բժշկները չէին համարձակեր իրենց ականջը հիւանդներու, մանուսանդ տիկիններու եւ օրիորդներու մերկ կուրծքին մօտեցնել, անպատէհ եւ ամօթ նկատուած էր այդ բանը: Հետեւաբար կը բուսականանային հեռուէն դուշակել հիւանդութիւնը: Լաէնէք գտաւ կուրծքի ձայները անուղղակի լսելու (auscultation médiate) մեթոտը, որ իր փառքը կը կազմէ, եւ շնորհք գործիք մը, տալով իր արուեստակիցներուն կուրծքի հիւանդութիւնները ախտորոշելու թանկագին միջոց մը: Իր ատենին աւելի մանրամասն պիտի ծանօթացնենք այս մեծ դէմքը:

**ԲՆՂՅԿԵՂԸ.**— Բժշկական Ակադեմիին մէջ, Բրօֆ. Մեւէթրիէ թըւանշաններով փաստեց թէ վերջին հարիւր տարւայ շրջանին քաղցկեղը (cancer) չէ աւելցած: Վերջին քսան տարւայ ընթացքին համեմատութիւնը 10-12 առ հարիւր է. միայն ստամոքսի քաղցքեղը 4 առ հարիւր:

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ**

**ՍՈՒՐԻՈՅ ՈՐԲԱՆՈՑՆԵՐՈՒՆ**  
Մէջ նիր Իսթ Բըլեֆը մրցանակներ հաստատած է այն որբերուն համար որոնք ամէնէն աւելի խնամք կը տանին իրենց ակուաններուն:

**ՃԱՀՃԱՏՆԵՂԻ ՄԱՍՆԱԳԷՏ**  
ԲԺԻՇԿՆԵՐ պարտատուելու համար,

Ազգերու Դաշնակցութեան առողջապահական բաժինը, այս տարի. Մայիս Յունիս եւ Յուլիսի ընթացքին մէկ ամիս տեւող դասընթացք մը կազմակերպեց Համպուրլի, Լոնտօնի, եւ Փարիզի մէջ: Դասընթացքին հետեւող բժշկները, տեսական դասախօսութիւններէ ետք, մեկնեցան ձահձատենդային զանազան վայրեր, քանի մը ամիս գործնական փորձառութիւն ձեռք բերելու համար:

**ԱՏԻՍ ՇՈՒՆՏԷՐ ՊՕԶ,** Հնդեկ գիտունը, գտած է որ բոյսերն ալ տեսակ մը բաղկերակ ունին, եւ թէ անոնց հիւթը ոչ թէ մազականութեամբ (capillarité) արմատներէն վեր կը բարձրանայ ու կը տարածուի բոյսին զանազան մասերուն մէջ, այլ տեսակ մը կծկովով դէպի վեր կը մղուի, ինչպէս արիւնը երակներու մէջ: Ատկէ զատ, միեւնոյն գիտունը զանազան փորձերով հաստատած է որ բոյսերն ալ մարդուն եւ կենդանիներուն նման, կ'ընդարմանան քլօրօֆօրմի եւ ուրիշ քնացուցիչ դեղերու ազդեցութեան տակ: Ահա թէ ինչպէս կենդանական եւ բուսական աշխարհները իրարմէ բաժնող անդունդը հետոյ հետէ կ'անհետանայ:

**ՄԵՔՄԻԿԱՅԻ ՄԷՋ,** նոր օրէնք մը պարտագիր կը դարձնէ ամուսնական բժշկական վկայագիրը: Ով որ կ'ուզէ ամուսնանալ, արտօնութիւն ստանալու համար պարտաւոր է դիմել քաղաքագետութեան եւ ներկայացնել իր առողջ ըլլալը հաստատող բժշկ. վկայագիր մը: Ժողովուրդը Լաւ արմատգրութեամբ ընդունած է նոր օրէնքը:

**ՕՐԷՆՔԻ ՄԸ ՀԱՄԱԶԱՅԵ, ՉԻ**  
խօսլովաքիս մէջ բժշկները պարտաւոր են կաւալարութեան յայտնել վերներական ախտերով վարակուածներու անունները: Երբ անոնք կամովին չզարմանուին, ստիկանութիւնը իրաւասութիւն ունի բունի դարմանել տալու պետական հիւանդանոցներուն մէջ:

**ՎԵՆԵՐԱԿԱՆ ՀԻՒԱՆՆՈՒԹԻՒՆ**  
 ՆԵՐՈՒ ԴԷՄ պոլյարիկա համար,  
 նոր օրինագիծ մը ներկայացուցուած է  
 դերմանական Ռայիսթակին: Մինչեւ  
 երեք տարի բանտարկութիւն կը նա-  
 խատեսուի այն անձերուն համար, ո-  
 րոնք գիտնալով հանդերձ որ այդ տի-  
 տերով վարակուած են, կը շարունակին  
 սեռային յարաբերութիւն ունենալ եւ  
 ուրիշներ վարակել:

**ՀԱՅԱՍՏԱՆ**

**ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ** մանկական մեծ  
 բուժարան մը պիտի հաստատուի, Կար-  
 միր խաչի նախաձեռնութեամբ: Այս  
 նպատակով 50,000 տուար հաւաքուած  
 է Նիւ-Եօրքի մէջ:

**ՂԱՄԱՐԼՈՒԻ ՇՐՋԱՆԻՆ ՄԷՋ**  
 սիֆիլիսը մեծ ծաւալ՝ առոցած ըլլա-  
 ւով, պոլյարիկա համար վեներական  
 դարմանատուն մը բացուած է Պարնի  
 գիւղին մէջ:

**ՃԱՀՃԱՏԵՆԴԻ (Մալարիա)** դէպ-  
 քերը զգալապէս աւելցած են Երե-  
 ւանի մէջ, դարնան տեղացած յորդ-  
 անձրեւներու հետեւանքով: Մայիսի  
 ընթացքին ճահճատենդի կայանները  
 դիմած են 23023 հիւանդներ, Յու-  
 նիսին՝ 24555:

**ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԳՈՐԾԸ**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ.**— Խորհրդային  
 թերթերու համաձայն, ամբողջ Հա-  
 յաստանի մէջ կայ 209 բժիշկ, 21  
 ատոմնաբույժ, 59 մանկաբարձուհի, 91  
 բուժակ, 137 դժուրեան քոյր, 43  
 դեղագործ, 95 դեղարանի աշակերտ  
 եւ 696 ուրիշ աշխատակից:

Յետոյ կան 25 հիւանդանոց, 9  
 ճահճատենդի կայան, 1 վեներական  
 դարմանատուն, 7 մանկական դարմա-

նատուն, 17 դեղարան, 30 բժշկական  
 կայան, 11 բուժանկայան, 17 բու-  
 ժարան, 7 բնակուծարան:

Ամբողջ Հայաստանի մէջ կայ 978  
 մահճակալ, որոնց 306ը ներքին հե-  
 ւանդներու համար, 141 վերաբուժա-  
 կան, 40 մանկաբարձուհիներու, 67  
 վեներական, 67 ծննդաբերութեան,  
 22 աչքի հիւանդութեան, 100 ման-  
 կական, 40 մտային հիւանդներու եւ  
 150 զանազան:

Առողջապահական վարչութեան  
 տեղեկագրին համաձայն, գաւառնե-  
 րու համար պէտք են 28 բժիշկ, 15  
 մանկաբարձուհի, 1 դեղագործ, 8  
 բուժակ, 12 դժուրեան քոյր եւ 4  
 ատոմնաբույժ:

**ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ ՏԱՐԱԾՈՒԱԾ**  
 ԵՆ կարգ մը հիւանդութիւններ —  
 թոքախտ, սիֆիլիս, թանջք (տիտան-  
 թէրի), դրախտա եւայլն: Անցեալ  
 տարի քաղաքին մէջ սարսիգ երեխա-  
 ներու մէջ տկարակազմները հարիւրին  
 16—17 կը հաշուէին, իսկ այս տարի  
 հարիւրին 26—27: Բաղաքին շուրջ  
 շատ աղտոտ է եւ բանջարեղէն իսկ  
 կարելի է չէ լուալ: Ընդհանրապէս  
 քաղաքը կը դառնուի շատ վատառողջ  
 վեճակի մէջ:

**ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ.**—  
 «Բուժմանք»ի առաջին թիւին մէջ,  
 մինչեւ այժմ լոյս տեսած բժշկա-  
 առողջապահական թերթերու շարքին  
 անուշադրոթեամբ մոռցուած է յիշել  
 «Բուժակ» ամսաթերթը, որ լոյս տե-  
 սած է 1917-1921 Բրայիտէնի (Սմե-  
 րիկա) մէջ, խմբագրութեամբ Բ. Բ. Ա.  
 Տէր-Մարկոսեանի: